# ԾՐԱԳԻՐ
# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| N | Գործողություններ | Գործողության մանրամասնեցում /եթե առկա է/ | Գործողության վերջնաժամկետ | Պատասխանատու մարմին /համակատարող/ | Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ | Ֆինանսավորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **I. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 1. | 1.1. ՀՀ արդարադատության նախարարության, առողջապահության նախարարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, պաշտպանության նախարարություն և ՀՀ Գլխավոր դատախազության կողմից ՀՀ քրեակատարողական հիմնարկներում, զորամասերում և զինվորական հիմնարկներից, մանկական փակ հաստատություններից և ազատության սահմանափակման հետ կապված այլ մարմիններում մահացության դեպքերի պատճառների և դրանց քննության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացում | Տվյալ կետի փոփոխությունները կատարվել են «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ առաջարկություններին համապատասխան. ՀԿ-ի մյուս առաջարկները նախկինում ներկայացված են եղել, որոնք կամ պահպանվել են, կամ , հանվել, կամ փոփոխվել քննարկումների 2-րդ փուլից հետո | 2014թ. առաջին եռամսյակ – համապատասխան մարմինների կողմից կամփոփովեն 2011-2013թթ. մահացության դեպքերը և դրանց առնչությամբ կատարված քննության արդյունքն | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, պաշտպանության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն: | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | երը: Տվյալ գործողութ յունները պետք է ունենա պարբերա կան բնույթ, առավել կարճ ժամկետն երում /եռամսյակ ը մեկ անգամ/ համապա տասխան հաշվետվո ւթյունների ներկայացում: | | | |
| **II. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 2. | 2.1. «Բժշկական սխալ» եզրույթի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն՝ համապատասխան չափորոշիչների սահմանման համար | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ առողջապահությա ն նախարարություն | Իրավական ակտի նախագծում, ներկայացում Կառավարու թյուն | |
| 3. | 3.1. «Առողջապահության մասին» ՀՀ | | 2014թ. | ՀՀ | Իրավական | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Կառավարություն | | չորրորդ եռամսյակ | առողջապահությա ն նախարարություն | ակտի նախագծում և ներկայացում ՀՀ Կառավարու թյուն | |
| 4. | 4.1. Պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման կազմաիրավական մոդելի մշակում և համապատասխան առաջարկություն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելը<br>4.2. | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ առողջապահությա ն նախարարություն | | |
| 5. | 5.1. Իրականացնել հիվանդների իրավունքների, ինչպես նաև առողջապահական ծառայություն-ներ տրամադրող անձանց /բժիշկներ, բուժքույրեր/ շրջանում իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, որոնք թույլ կտան հիվանդներին տեղեկանալ իրենց իրավունքների և պարտականությունների մասին և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն առողջապահական հաստատություններում, հստակ քայլեր ձեռնարկել առողջապահական ծառայություն- | | Պարբերա բար | ՀՀ առողջապահությա ն նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ներ տրամադրող անձանց կողմից իրենց իրավունքների և պարտականությունների հստակ պատկերացման և բժշկական էթիկայի նորմերի պահպանման ուղղությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով բժշկական ծառայություններ տրամադրող անձի կողմից հիվանդի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պահպանմանը և հիվանդի նկատմամբ հավասար /ոչ խտրական/ մոտեցում ցուցաբերելու մշակույթի ձևավորմանը | | | | | |
| 6. | 11.1 «Վերարտադրողական առողջության և մարդու վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով քայլեր ձեռնարկել վերարտադրողական առողջության և դրա հետ կապված իրավունքների պաշտպանության բարելավման ուղղությամբ: | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ առողջապահությա ն նախարարություն | Իրավական ակտի նախագծում և ներկայացում Կառավարու թյուն | |
| 7. | 7.1. Աշխատանքի անվտանգության և աշխատավայրերում աշխատողների առողջության պահպանման ազգային ծրագրի | | 2016թ. առաջին եռամսյակ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, | | ՀՀ պետական բյուջե դոնոր |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մշակում | | | ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | կազմակերպություններ |
| 8. | 8.1. ՀՀ քրեակատարողական հիմնարկներում ապահովել համապատասխան որակավորում ունեցող բուժ. անձնակազմով | | 2014թ. վերջին եռամսյակ | , ՀՀ արդարադատության նախրություն Ն | | |
| III. ՄՏՔԻ, ԽՂՃԻ, ԿՐՈՆԻ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ | | | | | | |
| 9. | Կրոնի և հավատքի վերաբերյալ դպրոցական ուսուցման ծրագրերի կատարելագործում՝ դպրոցական ծրագրերի նորմատիվ - իրավական հիմքի փոփոխության միջոցով՝ հաշվի առնելով նաև Կրոնների և հավատքների դպրոցական ուսուցման Տոլեդոյի ուղղորդող սկզբունքները, մասնավորապես, Թոլեդոյի ուղղորդող սկզբունքներն առանձին գրքույկով տպագրում. տարածում դպրոցներում, կրոնական դպրոցներում կրոնական կրթության վերաբերյալ առարկաների դասավանդող ուսուցիչների և կրթության ոլորտի պատասխանատուների շրջանում: Ուսուցիչների վերապատրաստման | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ծրագրերում ներառել այս փաստաթղթին ծանոթացնելու հարցը: «Հայոց եկեղեցու պատմություն», «Քրիստոնեական կրթություն» և «Կրոնի պատմություն» առարկաների բովանդակությունները համապատասխանեցնել Թղեդոյի ուղղորդող սկզբունքներին՝ հիմնովին վերանայել «Հայոց եկեղեցու պատմություն» դասագրքի բովանդակությունը՝ ուշադրություն դարձնելով վերնագրի և բովանդակության համապատասխանեցմանը, պատմական իրադարձությունների լուսաբանմանը, այլ ոչ դավանաբանական քարոզին | | | | | |
| 10. | «Խտրականության դեմ պայքարի մասին» օրենքի ընդունում | Նոր օրենքի ընդունում | 2014թ. երրորդ եռամսյակ | | | |
| 11. | 11.1. Հեռուստաընկերություններով կամ ռադիոյով հեռարձակել կրոնական հանդուրժողականությունը խթանող հաղորդումներ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՌԱՀ | | |
| 12. | 12.1. Կրոնի կամ խղճի հիմքերով խտրականության դրսևորումները կանխելու նպատակով | | 2014թ. չորրորդ եռամսյակ | ՀՀ կառավարության աշխատակազմի | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անհրաժեշտ իրավական և վարչական միջոցների ձեռնարկում | | | Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն, ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 13. | 13.1. Կրոնի և հավատքի վերաբերյալ դպրոցական ուսուցման ծրագրերի կատարելագործում՝ ուղղված անընդունելի հոգեորսությունից խոցելի խմբերի և առաջին հերթին՝ երեխաների և երիտասարդների պաշտպանվածության ապահովումը<br>13.2. Բացառել դպրոցներում ուսուցիչների հավատաքննության դեպքերը և աշխատանքի ընդունումը կամ հեռացումը՝ ըստ կրոնական պատկանելության | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |
| **IV. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 14. | 14.1. Գրանցել և համակարգ մտցնել «Հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում օգտագործվող ձեռնարկների | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | փորձաքննության և գործածության երաշխավորման կարգը» | | | | | |
| 15. | 15.1. Իրականացնել միջոցառումներ Երևանի և ՀՀ մարզերի բոլոր հանրակրթական դպրոցներում ջեռուցման խնդիրը լուծելու, անբավարար պայմաններում գտնվող դպրոցները հիմնանորոգելու և «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրով նախատեսված արդյունքին հասնելու ուղղությամբ | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |
| 16. | 16.1. Օրենսդրական փոփոխությունների միջոցով ապահովել ներառական կրթության ներդրումը բոլոր հանրակրթական դպրոցներում | | 2014թ.վերջին եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Իրավական ակտի նախագծում և ներկայացում Կառավարություն | |
| 17. | 17.1. Ձեռնարկել արդյունավետ միջոցներ դպրոցների մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների նիստերը հասարակության համար թափանցիկ դարձնելու ուղղությամբ | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |
| 18. | 18.1. Օրենսդրական բարեփոխումների միջոցով ապահովել պետական ֆինանսավորմամբ բոլոր | | 2014թ.վերջին եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կրթական հաստատությունների բյուջեների և բյուջեների փոփոխությունների ու կատարողականների, ինչպես նաև դրանց ղեկավար մարմինների որոշումների հրապարակայնությունը | | | | | |
| 19. | 19.1. Ձեռնարկել միջոցներ թափանցիկ դարձնելու համար դպրոցների կառավարման խորհուրդների գործունեությունը՝ հատկապես դպրոցի տնօրենների ընտրությունների ժամանակ<br>19.2. Վերանայել աշակերտների թվաքանակով դպրոցներին հատկացվող ֆինանսավորման կարգ. քիչ թվով աշակերտներ ունեցող դպրոցները հատկացված գումարներով հնարավորություն ունենան բարելավել նվազագույն հիգիենիկ պայմանները, ձեռք բերեն անհրաժեշտ գույք, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ, ունենան համակարգչային դասարան և այլն | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |
| 20. | 20.1. Ձեռնարկել միջոցներ քաղաքային և գյուղական հանրակրթական ուսումնական հաստատությունների համաչափ զարգացման ուղղությամբ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 21. | 21.1. Քննարկել ՀՀ Նախագահի համապատասխան հրամանագրով սահմանված կարգում փոփոխություններ կատարելու հարցը և հիմք ընդունելով փաստացի իրավիճակը՝ սահմանել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից մինչև ուսումնառության ավարտը տարկետում տալու վերաբերյալ կառավարության որոշումների նախագծերը միայն ՀՀ Նախագահի աշխատակազմ ներկայացնելու պահանջ<br>21.2. Մասնագիտական կրթության հասանելիությանն ու մատչելիությանն ուղղված անհրաժեշտ միջոցների ձեռնարկում | | 2015թ. երրորդ եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| **V. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 22. | 22.1. Երիտասարդության շրջանում զբաղվածության խնդրի լուծման կապակցությամբ մշակել հստակ ծրագրեր և իրականացնել տարբեր միջոցառումներ ՀՀ բոլոր մարզերում՝ ապահովելով դրանց շարունակական բնույթը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ սպորտի և երիտասարդությա ն նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 23. | 23.1. Կատարել օրենսդրական փոփոխություններ՝ բժշկասոցիալական փորձաքննության կանխատեսելի, անաչառ համակարգի ստեղծման համար | | 2016թ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն | Իրավական ակտի նախագծում և ներկայացում Կառավարություն | |
| 24. | 24.1. Աշխատանքային վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում. աշխատանքային վեճերի լուծմանն առնչվող օրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների նախագծում | | 2016թ. առաջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| 25. | 25.1. Ապահովել պատշաճ վերահսկողություն՝ նորմերի խախտումներով արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործման բացառման նպատակով<br>25.2. Ձեռնարկել միջոցներ՝ պատերազմի, բնական աղետների ու տեխնածին վթարների սպառնալիքի կամ առաջացման դեպքում բնակչության ազդարարման և իրազեկման գործընթացների բարելավման | | 2014թ. չորրորդ եռամսյակ<br>2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն | | ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ուղղությամբ<br>25.3. Մշակել և ներդնել արտակարգ իրավիճակների հետևանքներով բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման ապահովագրական համակարգ | | | | | |
| 26. | 26.1. Մինչև 14 տարեկան երեխաների համար թույլատրելի թեթև աշխատանքներում ներգրավման կարգավորում: | | 2014թ. չորրորդ եռամսյակ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրավական ակտի նախագծում և ներկայացում Կառավարու թյուն | |
| 27. | 27.1. “Մշակել և իրականացնել աշխատաշուկայում առանձին նպատակային խմբերի ինտեգրմանն ուղղված նոր ծրագրեր”, | ՀՀ զբաղվածության 2013-2018թ.թ.ռազմավարութ յան նպատակներից ելնելով ներդնել նոր ծրագրեր | 2014թ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրավական ակտի նախագծում և ներկայացում Կառավարու թյուն | Պետական բյուջե, ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված միջոցներ |
| 28. | 28.1. Ապահովել “Հանրային աշխատանքներ” ծրագրի վերագործարկումը | Հաշվի առնելով հեռավոր մարզերում աշխատանքի իրավունքի իրացման դժվարությունները, ծրագիրը վերագործակել որպես աշխատանքի իրավունքի | 2014թ առաջին եռամսյակ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրականացվ ող ծրագիր | Պետական բյուջե, ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | իրակացման իրատեսական հնարավորություն | | | | |
| 29. | 29.1. Իրականացնել միջոցառումներ՝ ուղղված քրեակատարողական հիմնարկներում ազատման ենթակա անձանց աշխատաշուկայում ինտեգրվելուն | Այդ նպատակով ապահովել զբաղվածության պետական ծառայություն գործակալության և այդ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչների մուտքը քրեակատարողական հիմնարկներ | 2014թ | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Համապատասխան իրավական ակտի առկայություն | Պետական բյուջե, ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված միջոցներ |
| 30. | 30.1. Զբաղվածության պետական ծառայություն գործակալության տարածքային կենտրոններին կից միգրացիոն ռեսուրս կենտրոնների ստեղծում | Պոտենցիալ միգրանտների իրազեկման մակարդակի բարձրացում | 2013-2015թթ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Գործող կենտրոններ | Պետական բյուջե և ֆինանսավորման այլ աղբյուրներ |
| **VI. ԲԱՎԱՐԱՐ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 31. | 31.1. Ձեռնարկել արդյունավետ միջոցներ ՔԿՀ-ներում հանձնուքներն ընդունելու, խցերը օդափոխելու, սննդամթերքի որակի, քանակի, ինչպես նաև պատրաստվող ճաշերի բազմազանության, ժամկետանց դեղորայքների տրամադրման | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատությաննախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բացառման, տեսակցությունների տրամադրման, վարչակազմի և դատապարտյալների միջև եղած օրինական փոխհարաբերությունների բացակայության խնդիրների լուծման ուղղությամբ | | | | | |
| 32. | 32.1. Բարձրացնել ՔԿՀ-ներում դատապարտյալներին և կալանավորներին ցուցաբերվող բուժօգնության որակը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 33. | 33.1. Ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ աղետի գոտու բնակավայրերում՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում շահառու ճանաչված անձանց բնակարան (բնակելի տուն) հատկացնելու գործընթացի պատշաճ կազմակերպման անցկացման նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու ուղղությամբ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | |
| 34. | 34.1. Երիտասարդ ընտանիքների համար, համապատասխան ծրագրերի շրջանակներում բնակարան ձեռք բերելու նպատակով սահմանել միատեսակ պահանջներ և պայմաններ, | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ապահովել գործընթացի նկատմամբ վերահսկողությունն ու դրա թափանցիկությունը | | | | | |
| 35. | 35.1. | | | | | |
| 36. | 36.1. Բարելավել սննդամթերքի անվտանգության համակարգը, մասնավորապես՝ կատարելագործել օրենսդրական համապատասխան հիմքերը | | 2015թ. դեկտեմբեր | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | |
| 37. | 37.1. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ուժեղացնելու համար հսկողությունն ոչ պարենային ապրանքների մակնշման, օգտագործման և պահպանման պահանջների պահպանման նկատմամբ | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | |
| 38. | 38.1. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության ստուգման նպատակով՝ բարձրացնել վերահսկողության արդյունավետությունը | | 2014թ. չորրորդ եռամսյակ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | |
| 39. | 39.1. «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ հանրապետության ողջ տարածքում մորթի սպանդանոցների ստեղծմանն ուղղված միջոցառումների | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նախատեսում<br>39.2. Սահմանել պատշաճ հսկողություն ՀՀ ներկրվող տարբեր տեսակի սերմացուների որակի նկատմամբ | | | | | |
| 40. | 40.1. Միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ | | 2015թ. վերջին եռամսյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ /համաձայնությամբ/ | | |
| 41. | 41.1. Շարունակել խթանել գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին մատչելի պայմաններով վարկեր տրամադրելու քաղաքականությունը | | 2016թ. վերջինեռամսյակ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կենտրոնական բանկ /համաձայնությամբ/ | | |
| 42. | 42.1. Մշակել արդյունավետ մոնիթորինգի համակարգ՝ կենսաթոշակների և նպաստների նշանակման, քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման օրենսդրությամբ | | 2013-2016թթ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | սահմանված պահանջների պատշաճ կատարումը վերահսկելու համար | | | | | |
| 43. | 43.1. Կենսաթոշակների չափերի պարբերական բարձրացում՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները<br>43.2. Նախ նվազեցնել, ապա բացառել աղքատությունը կենսաթոշակառուների շրջանում՝ ապահովելով համակարգի ֆինանսական կայունությունը | | շարունակական | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| 44. | 44.1. Ուժեղացնել վերահսկողությունը քաղաքաշինական փաստաթղթերի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման և համայնքների ղեկավարների՝ ինքնակամ շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման պարտականության կատարման նկատմամբ | | 2014թ. չորրորդ եռամսյակ | | | |
| 45. | 45.1. Հետևողական քայլեր ձեռնարկել համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին բնակիչներին տեղեկացնելու, քննարկումներ | | 2014թ.-ից շարունակական | ՀՀ քաղաքաշինության նախարարություն /համաձայնությամբ/ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կազմակերպելու գործընթացը պատշաճ ապահովելու ուղղությամբ | | | | | |
| 46. | 46.1. Ապահովել պատշաճ վերահսկողություն՝ քաղաքաշինական նորմերի խախտումներով շինարարական աշխատանքների կատարման և շինարարության սահմանված ժամկետների խախտումների բացառման նպատակով | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն /համաձայնությամբ/ | | |
| 47. | 47.1. «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն /համաձայնությամբ/ | Իրավական ակտի նախագծում և ներկայացում Կառավարություն | |
| **VII. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 48. | 48.1. Պետական նպաստներիվարչարարության բարելավում, պետական նպաստների չափերի բարձրացում | Պետական նպաստների նշանակման ժամանակ դիմողի տվյալների և այլ նախարարությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների տեղեկատվական բազաներում առկա տվյալների համադրելիության բարձրացում, | 2014 թ. առաջին եռամսյակ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրավական ակտի նախագիծ | ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մոնիթորինգի և վերահսկողության մեխանիզմների հստակեցում, սոցիալ տնտեսական զարգացման միտումներին համահունչ պետական նպաստների չափերի բարձրացում | | | | |
| 49. | 49.1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական հենքի ապահովում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին) համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների կատարում | 2015թ. առաջին եռամսյակ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | Իրավական ակտի նախագիծ | ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված միջոցներ |
| 50. | 50.1. Տնտեսական և սոցիալական | | 2014թ | ՀՀ ԱԳՆ | | ՀՀ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրավունքների պաշտպանվածությունը կարգավորող օրենսդրության համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին | | առաջին եռամսյակ | | | պետական բյուջե, ՀՀ օրենսդրու-թյամբ չարգելված միջոցներ |
| 51. | 51.1. Անապահով ընտանիքներին տրամադրվող նպաստների հետ կապված բարեփոխումների իրականացում | Օրենսդրական փոփոխությունների միջոցով ընտանիքի անապահովության աստիճանի (միավորի) հաշվարկման չափանիշների կատարելագործում | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Իրավական ակտի նախագիծ | |
| **VIII. ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 52. | 52.1. Մշակել արդյունավետ մեխանիզմներ հանրության համար պարզեցնելու պետական և տեղական իշխանությունների կողմից անձանց՝ իրենց վերաբերող տեղեկությունների տրամադրման վարչարարությունը | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | |
| 53. | 53.1. Մարդու իրավունքների պաշտպանին՝ տվյալների պաշտպանության իրավական դաշտը վերահսկելու իրավասություն շնորհելու հարցի քննարկման համար անհրաժեշտ | | 2016թ. առաջին եռամսյակ | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ուսումնասիրությունների և վերլուծությունների կատարում, համապատասխան զեկույցի պատրաստում | | | | | |
| 54. | 54.1. Անհատական տվյալների պաշտպանության ոլորտում առկա բացթողումների լրացում՝ Եվրոպական միության ընդունած չափանիշներին համապատասխան ներպետական օրենսդրության բարեփոխումների՝ անհրաժեշտ օրենսդրականան ակտերի կամ դրանց փոփոխությունների նախագծման միջոցով<br>54.2. Օրենքով սահմանել դատարանի հրապարակային դատական ակտերում երեխայի ինքնությունը բացահայտող տեղեկությունների գաղտնիության պահպանումը<br>54.3. Օրենքով արգելել լրատվության միջոցներին հրապարակելու հանցագործության կատարման մեջ մեղադրվող անչափահասի անձնական տվյալները, լուսանկարը, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկություն, որը | | 2015թ. առաջին եռամսյակ<br>2014թ. վերջին եռամսյակ<br>2014թ. առաջին եռամսյակ<br>2014թ. երկրորդ եռամսյակ<br>2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն /համաձայնությամբ/ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն /համաձայնությամբ/ | Իրավական ակտի ընդունում | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կարող է բացահայտել երեխայի ինքնությունը<br>54.4. Լրատվամիջոցների ներկայացուցիչների համար քրեական արդարադատության /այդ թվում. անչափահասների քր. արդարադատության/ լուսաբանման վերաբերյալ դասընթացների կազմակերպում և իրականացում, որը կներառի անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքը հասարակության ավելի լայն շերտերի համար, մասնավորապես, ընդգրկելով խոցելի խմբերի վերաբերյալ տեղեկատվության լուսաբանման մշակույթը | | | ՀՀ արդարադատությ ան նախարարություն<br><br>ՀՀ արդարադատությ ան նախարարություն<br><br>ՀՀ ԱՆ «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ | | |
| 55. | 55.1. 1981թ. Անհատական տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անձանց պաշտպանության Եվրոպայի խորհրդի կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարում | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատությ ան նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն /համաձայնությամբ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | / | | |
| 56. | 56.1. «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը համապատասխանեցնել Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի գործողությունների պլանին | Տվյալ գործողությունը կատարելիս հիմք ընդունել ՀՀ վարչապետի ս.թ.02/14.13/1827-13հանձնարարականը | 2014թ-ի վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| **IX. ԱԶԱՏ ՈՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 57. | 57.1. Միջոցներ ձեռնարկել՝ ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիների ընտրական իրավունքն ապահովելու նպատակով | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 58. | 58.1. Համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելու միջոցով հստակեցնել պատգամավորության թեկնածուների գրանցման համար սահմանված նստակեցության ցենզը | | 2014թ. առաջին կիսամյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 59. | 59.1. Ընտրախախտումների կանխարգելման նպատակով ձեռնարկել միջոցներ, որը կապահովի անձը հաստատող փաստաթղթում դրոշմակնիքի | | 2014թ. երկրորդ կիսամյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | թանաքի՝ մինչև ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված ժամկետի ավարտը փաստաթղթում պահպանվելը, իսկ այդ ժամկետի ավարտից հետո՝ փաստաթղթից անհետանալը | | | | | |
| 60. | 60.1. Շարժասայլակով տեղաշարժվող ընտրողների ընտրելու իրավունքի իրականացման արդյունավետության և մատչելիության ապահովման համար տեղամասային կենտրոնի տեղակայման շենքերը հարմարեցնել թեքահարթակներով, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել բուժհաստատությունում չգտնվող, սակայն հիվանդության կամ հաշմանդամության պատճառով ընտրական տեղամաս այցելելու հնարավորություն չունեցող անձանց կողմից իրենց ընտրական իրավունքի մատչելի ձևով իրականացումը կարգավորող հստակ դրույթի սահմանման ուղղությամբ | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| 61. | 61.1. Միջոցներ ձեռնարկել ապահովելու ՀՀ տարածքից դուրս | | 2014թ. առաջին | ՀՀ արդարադատությ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բնակվող ՀՀ քաղաքացիների համար ՀՀ ընտրություններին մասնակցելու հավասար հնարավորությունը, ինչպես նաև ապահովելու համար երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրվելու իրավունքը | | կիսամյակ | ան նախարարություն | | |
| 62. | 62.1. Օրենսդրությամբ սահմանել թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով կաշառք ստանալու համար կաշառքը ստացողի կողմից ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու և պատկան մարմինների հետ համագործակցելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին դրույթ | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ գլխավոր դատախազություն | | |
| 63. | 63.1. Պարբերաբար միջոցներ ձեռնարկել հստակեցնելու ՀՀ տարածքում բնակվող ՀՀ քաղաքացիների շրջանակը | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ ոստիկանություն | | |
| 64. | 64.1. Նախատեսել տեխնիկական միջոցառումներ /ընտրատեղամասերի և դրանց | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ ԿԸՀ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մուտքերի տարածքների տեսալուսանկարահանում/ ապահովելու քվեարկության օրվա գործընթացների հրապարակայնությունը | | | | | |
| 65. | 65.1. Առավել արդյունավետ դարձնել ընտրությունների օրինականության բողոքարկման համար սահմանված ողջամիտ ժամկետները | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 66. | 66.1. Ընտրական գործընթացների իրավական ու կառուցակարգային երաշխիքների ամրապնդման համար անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնություններ | | 2014թ. երկրորդ եռամսյակ | ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով /համաձայնությամբ/, ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 67. | 67.1. Բացառել ընտրացուցակների չարաշահումը՝ հստակեցնելով մշտապես բնակվողների շրջանակը և հրապարակելով ստորագրված ընտրացուցակները | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ ԿԸՀ /որպես պատասխանատու/ ա ՀՀ ոստիկանություն | | |
| 68. | 68.1. Բացառել վարչական ռեսուրսի չարաշահման հնարավորությունը /օրինակ՝ արգելելով համայնքների ղեկավարներին հանդես գալ որպես վստահված անձ կամ իրականացնել քարոզչություն/ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ԿԸՀ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ապահովել հավասար իրավունք թեկնածուների համար | | | | | |
| 69. | 69.1. Քվեարկության անճշտությունների հաշվարկում նախատեսել ընտրախախտումների լիարժեք արտացոլման և դրանց որոշակի ծավալի դեպքում՝ ընտրությունները անվավեր ճանաչելու մեխանիզմներ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ԿԸՀ | | |
| 70. | 70.1. Սահմանել ընտրությունների օրինականության բողոքարկման համար ողջամիտ ժամկետներ<br>70.2. Ապահովել արդյունավետ պաշտպանության հնարավորություն ընտրական իրավունքի խախտու,մների դեպքերում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 71. | 71.1. Վարչական և քրեական օրենսգրքերում ուժեղացնել պատասխանատվությունը վարչական ռեսուրսի կիրառման համար | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 72. | Կատարել ուսումնասիրություններ և ձեռնարկել քայլեր ընտրական գործընթացի կազմակերպմանը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ներգրավված վարչական մարմինների քաղաքական անկախության ապահովման ուղղությամբ | | | նախարարություն | | |
| 73. | 73.1. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում, որով կսահմանվի համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու նպատակով հանրաքվե նշանակելու հնարավորությունը | | | | | |
| **X. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 74. | 74.1. Հավաքների ազատության իրավունքի իրականացման նպատակով օրենքներում և կանոնակարգերում կատարված փոփոխությունների վերաբերյալ իրավապահ մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների՝ սահմանված կարգով շարունակական վերապատրաստում՝ ուղղված պրակտիկայում կամայական խոչընդոտների ծագման կանխմանը | | 2014թ.-ից պարբերաբար | ՀՀ ոստիկանություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | |
| **XI. ԱԶԱՏ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 75. | 75.1. Օրենսդրական փոփոխությունների արդյունքում | | 2014թ. վերջին | ՀՌԱՀ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | միջոցներ ձեռնարկել հանրային հեռուստաընկերությունների կողմից ապահովելու հանրության համար առավել հարմար ժամի հեռարձակվող լրատվական հաղորդումներում սուրդոթարգմանություն կամ հայերեն լուսագրեր՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի դրույթների պահանջներին համապատասխան | | եռամսյակ | | | |
| 76. | 76.1. Ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ ապահովելու հանրային հեռուստառադիոընկերության պարտավորության պատշաճ կատարումն ապահովելու հեռարձակվող հաղորդումների թեմատիկ, բովանդակային բազմազանությունը հնարավոր հաղորդաշարերի և հաղորդումների տեսակների տեսքով | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՌԱՀ | | |
| 77. | 77.1. Հանրային հեռուստառադիոընկերության կողմից բազմակարծության ապահովման նպատակով համագործակցել քաղաքացիական հասարակության, ինչպես նաև | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՌԱՀ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | միջազգային փորձագետների հետ | | | | | |
| 78. | 78.1. Հետևողական լինել հեռուստատեսության և ռադիայի ոլորտի օրենսդրության խախտումների բացահայտման և համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառման ուղղությամբ, մասնավորապես՝ հանրային հեռուստառադիոընկերության կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և “Գովազդի մասին” ՀՀ օրենքի 9-րդ ոդվածի 1-ին մասի դրույթների պահպանման ուղղությամբ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՌԱՀ | | |
| 79. | 79.1. Համապատասխանեցնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը Սահմանադրական դատարանի 2012թ. մարտի 6-ի թիվ ՍԴՈ-1010 որոշմանը | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ արդարադատութանախարարություն | | |
| 80. | 80.1. Ապահովել ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացվող բյուջեի ռազմական ծախսերը չընդգրկող մասի հրապարակայնությունը | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| 81. | 81.1. Միջազգային փորձին | | 2014թ. | ՀՀ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համապատասխան օրենսդրորեն հստակեցնել տեղեկատվության դասակարգման չափանիշները՝ ՀՀ պետական, ծառայողական, առևտրային և անձնական գաղտնիքների | | երրորդ եռամսյակ | արդարադատութանախարարություն | | |
| 82. | 82.1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համար ուսուցման և իրազեկման ապահովում՝ միջազգային չափանիշներին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան | | 2013-2014թթ. պարբերաբար | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | |
| 83. | 83.1. Հեռուստատեսության և ռադիոյի կարգավորող մարմինների ընտրության և կազմավորման կարգի համապատասխանեցումը միջազգային և առաջին հերթին՝ եվրոպական պահանջներին | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | |
| 84. | 84.1. Արտահայտման ազատության և ազգային անվտանգության ապահովման չափանիշների միջև առկա սահմանազատման միջազգայնորեն ընդունված չափանիշների վերաբերյալ պետական ծառայողների և լրատվամիջոցների | | 2013-2014թթ. պարբերաբար | ՀՀ ոստիկանություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերապատրաստման անցկացումը՝ հաշվի առնելով Յոհանեսբուրգյան սկզբունքներն ազգային անվտանգության, արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության վերաբերյալ | | | | | |
| 85. | 85.1. «Ատելության կոչեր» եզրույթի ամրագրումը ՀՀ գործող օրենսդրության մեջ՝ սահմանելով ատելության կոչերի արգելքը մասնավորապես ԶԼՄ-ներում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ ԱՆ | | |
| XII. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ՉԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ | | | | | | |
| 86. | 86.1. Խոշտանգման սահմանման լիարժեք համապատասխանությունը Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ Կոնվենցիայի 1-ին և 4-րդ հոդվածներին, ինչպես նաև Կոնվենցիայի բոլոր դրույթներին համապատասխանեցում<br>86.2. Օրենսդրորեն սահմանել խոշտանգուների ենթարկված անձի՝ փոխհատուցում ստանալու իրավունքը | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխության ընդունումը<br><br>Իրավական ակտի նախագծում | |
| 87. | 87.1. Ազատազրկման բոլոր վայրերում խոշտանգումների և | ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ | 2014թ. առաջին | ՀՀ ԿԱ Ոստիկանություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացքն ապահովող անկախ համակարգի ստեղծում, որի հիմնական մանդատը կլինի խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող ցանկացած արարքի հետապնդումը և տվյալ արարքի ծանրությանը համաչափ պատժումը<br>87.2. Սահմանել հատուկ ընթացակարգեր՝ ցանկացած դեպքի առնչությամբ անկախ հետաքննություն իրականացնելու ուղղությամբ՝ անկախ այն հանգամանքից անձի կողմից պաշտոնական բողոք ներկայացվում է, թե ոչ<br>87.3. Իրականացնել պարբերական դիտարկումներ խոցելի խմբերի շրջանում՝ անազատության մեջ պահելու վայրերում, ոստիկանության համապատասխան բաժիններում, զինված ուժերում՝ խոշտանգումների դեպքերի հաշվառման և բացահայտման | պայքարի հանձնաժողովին ներկայացվող պարբերական զեկույցների ներկայացման շրջանակենում ապահովել.<br><br>-«Մասնակից պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի ոստիկանության բաժիններում և կալանավայրերում հարցաքննությունների ձայնա- և տեսագրման ապահովման համար, որպես հետագա կանխարգելիչ միջոց»:<br>-«Մասնակից պետությունը պետք է փոխի իր օրենսդրությունը, և նախատեսի դրույթներ՝ ուղղված խոշտանգումների զոհերի իրավունքների վերականգնմանը, ներառյալ վնասների | եռամսյակ<br><br>2014թ. չորրորդ եռամսյակ<br><br>2014թ. չորրորդ եռամսյակ<br><br>2014թ. | ՀՀ բնապահպանությա ն նախարարություն<br><br>ՀՀ արդարադատությ ան նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ )<br><br>ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան /համաձայնությամբ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նպատակով, հավաքագրած տվյալների հիման վրա հետամուտ լինել կատարելու հետաքննություն՝ մեղավորներին ըստ արժանվույն պատասխանատվության ենթարկելու համար՝ անկախ այն հանգամանքից պաշտոնական բողոք ներկայացվում է, թե ոչ<br>87.4. Ապահովել մեխանիզմներ անկախ դիտորդական խմբերի կողմից հարցաքննության վայրերում մշտադիտարկումներ իրականացնելու համար՝ խոշտանգումների դեպքերը բացահայտելու, կանխարգելելու նպատակով<br>87.5. Խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ իրավապահ մարմինների, զինծառայողների, բուժանձնակազմերի շրջանում (առհասարակ այն բոլոր անձանց, որոնք առնչվում են ազատազրկման վայրերի աշխատանքին, խոցելի խմբերին) պարբերական դասընթացների կազմակերպում՝ խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, դրանց չափանիշների վերաբերյալ իրազեկվածության | արդար և համաչափ փոխհատուցումը, որոնք առաջացել են Համաձայնագրի 14-րդ հոդվածին համապա-տասխան»:<br>-«Մասնակից պետությունը պետք է ապահովի, որ համապատասխան պաշտոնատար անձինք համաձայն Ստամբուլի Համաձայնագրի, անցնեն վերապատրաստում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի դրսևորումները ճանաչելու համար»:<br><br>Վերապատրաստման դասընթացներ իրավապահ մարմինների, զինծառայողների, բուժանձնակազմի աշխատակիցների համար | երկրորդ եռամսյակ eram եռամսյակ | /, ՀԿ-ներ<br><br>ՀՀ արդարադատությ ան նախարարություն, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ )<br><br>ՀՀ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բարձրացման համար<br>87.6. Պարբերաբար վերանայել հարցաքննության կանոնները, հրահանգները, մեթոդները և կիրառությունը, ինչպես նաև ձերբակալված, կալանավորված և դատապարտված անձանց պահելու պայմանները և վերաբերմունքը նրանց նկատմամբ | | | արդարադատությ ան նախարարություն | | |
| 88. | 88.1. Կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ բացառելու համար ժամկետային զինծառայողների ծառայությունը զինվորական դատախազությունում անցկացնելը | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| 89. | 89.1. ՀՀ քրեական օրենսգրքում հստակորեն սահմանել խոշտանգման հասկացության չափանիշներ, որոնք հնարավորություն կտան տարանջատելու խոշտանգումը բռնության այլ ձևերից: Նախագիծը մշակել՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» 1984թ. | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատութա ննախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կոնվենցիան՝ համապատասխանեցնելով ներպետական օրենսդրության նորմերը կոնվենցիայով սահմանված ընդհանուր դրույթներին: Սա հնարավորություն կտա տարանջատելու, թե որ դեպքերն են հանդիսանում խոշտանգումներ և որոնք բռնության դեպքեր: Որոշակիության սահմանումը հնարավորություն կտա կոնկրետ դեպքի պարագայում կոնկրետ պատիժ սահմանել: | | | | | |
| 90. | 90.1. ՔԿՀ-ների գերբնակեցման խնդրի լուծման նպատակով օրենսդրությամբ սահմանել առավել խիստ պայմաններ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար, ինչի արդյունքում կբացառվի կալանավորների համար պատիժը անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող պայմաններում կրելը: Միջոցներ ձեռնարկել նաև նոր ՔԿՀ-ներ կառուցելու ուղղությամբ, որոնք կապահովեն միջազգային չափորոշիչներին համապատասխան պատժի | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ արդարադատութանախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կրման պայմաններ | | | | | |
| 91. | 91.1. Ձերբակալված կամ բերման ենթարկված անձանց նկատմամբ բռնությունները ու անմարդկային վերաբերմունքը կանխելու նպատակով բարձրացնել ոստիկանության աշխատակիցների մասնագիտական որակավորման մակարդակն և ուժեղացնել վերահսկողությունն ոստիկանության բաժիններում, | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ ոստիկանություն | | |
| 92. | 92.1. Ձեռնարկել միջոցներ քրեակատարողական հիմնարկներում դատախազական հսկողության մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ, ինչպես նաև բացառել ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների խախտման դեպքերը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատութանախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն | | |
| | կազմակերպությունների կողմից օրենքներով, իրավական այլ ակտերով և պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ, մոնիթորինգային գործընթացների ուժեղացում՝ ըստ «Բնապահպանության վերահսկողության մասին» ՀՀ օրենքի | | | | | |
| 173. | 173.1. Հետևողական քայլեր ձեռնարկել էլեկտրաէներգիայի օգտագործման անվտանգության ապահովման, քաղաքացիների կյանքի, գույքի և շրջակա միջավայրի՝ տեխնիկական կանոնակարգերով և իրավական այլ ակտերով սահմանված նորմերի պահպանման, ինչպես նաև մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | | |
| 174. | 174.1. Հասարակայնության արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նպատակով Օրհուսի կոնվենցիայով | Օրենսդրական փոփոխություններ | 2014թ. առաջին եռամսյակ | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նախատեսված «բավարար շահագրգռվածության առկայության» հասկացության սահմանում | | | | | |
| 175. | 175.1. Հասարակայնության արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նպատակով հասարակայնության համապատասխան ներկայացուցիչների որոշումների, գործողության և անգործության օրինականության իրավական և ընթացակարգային տեսանկյունից վիճարկելու հնարավորության ապահովում՝ Օրհուսի կոնվենցիայով նախատեսված «բավարար շահագրգռվածության առկայության» պարագայում | Օրենսդրական փոփոխություններ | 2014թ. առաջին եռամսյակ | | | |
| 176. | 176.1. Հասարակայնության արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման նպատակով Հանրային պաշտպանի գրասենյակին բնապահպանական գործերով անվճար ներկայացուցչություն իրականացնելու նպատակով | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | միջոցների հատկացում | | | | | |
| 177. | 177.1. Շրջակա միջավայրի պահպանության հարցերով հասարակական կազմակերպությունների վարչական-դատավարական իրավասուբյեկտության հիմնախնդրի վերաբերյալ ազգային աշխատանքային հանդիպում<br>177.2. Օրենսդրական բարեփոխումների չափանիշների վերաբերյալ առաջարկությունների մշակում | | 2014թ. երկրորդ եռամսյակ | ՀՀ արդարադատությ ան նախարարություն, ՀՀ բնապահպանությա ն նախարարություն/ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն | | Դոնոր կազմակերպ ություններ |
| 178. | 178.1. ՀՀ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միջազգային պայմանագրերի իմպլեմենտացիա յի վիճակի վերաբերյալ գիտագործնական հետազոտության իրականացման հայեցակարգի նախապատրաստում, հիմնախնդիրների և լուծման հնարավոր ուղիների որոշակիացում | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ բնապահպանությա ն նախարարություն/ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն | | ՀՀ պետական բյուջե |
| 179. | 179.1. Սահմանել մեթոդաբանություն՝ տնտեսական գործունեության | | 2014թ. վերջին | ՀՀ բնապահպանությա | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նպատակահարմարության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում ապահովելու շրջակա միջավայրին և մարդու առողջությանը հասցվող վնասների հաշվարկը | | եռամսյակ | ն նախարարություն | | |
| 180. | 180.1. Հստակեցնել շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող նախագծերի, պլանների, ծրագրերի, քաղաքականությունների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում հասարակության մասնակցության գործընթացները և պատասխանատվությունը | Հանրային մասնակցությամբ վերհանել շրջակա միջավայրի և դրա հետևանքով մարդու սոցիալական վիճակի ու առողջության վրա բացասական ազդեցության հնարավորությունը Ապահովել քաղաքացիների մասնակցությունն իրենց առնչվող որոշումների ընդունման գործընթացում | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ ԲՆ | | |
| 181. | 181.1. Ստեղծել մեխանիզմներ շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող (մասնավորապես՝ հանքավայրերին հարող) | | 2014թ. երկրորդ եռամսյակ | ՀՀ ԲՆ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տարածքներում հիվանդությունների ախտորոշման, մոնիթորինգի և առողջությանը հասցվող վնասի փոխհատուցման համար | | | | | |
| 182. | 182.1. Կլիմայի գլոբալ տաքացման հետևանքների արդյունքում ադապտացիայի ազդեցության տակ գտվողների համար բնապահպանակն իրավունքների սահմանում՝ջրի իրավունք, սննդի իրավունք | Օրենսդրական փոփոխություններ | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ բնապահպանությա ն նախարարություն | | |
| **XXII. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ** | | | | | | |
| 183. | 183.1. ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի լրացուցիչ արձանագրության վավերացման ընթացակարգերի ապահովում<br>183.2. Տվյալ միջազգային դաշնագրի շրջանակներում ստեղծված բողոքարկման մեխանիզմից յուրաքանչյուր անձի օգտվելու հնարավորության ստեղծում | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ ԱԳՆ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | |
| 184. | 184.1. Բարձրացնել վերահսկողությունը հանրային ծառայությունների ոլորտում սպասարկման որակի նկատմամբ | | 2014թ. ընթացքու մ | Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 185. | 185.1. Միջոցներ ձեռնարկել գազի, և էլեկտրաէներգիայի հաշ¬վիչների այլընտրանքային լաբորատորիաներ հիմնելու ուղղությամբ | | 2014թ.վերջին եռամսյակ | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | | |
| 186. | 186.1. Ապահովել էլեկտրաէներգիայի տատանումների կամ խափանման հետևանքով առաջացած վեճերի քննության և լուծման վերաբերյալ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավասությունների մասին հասարակության իրազեկվածությունը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | | |
| 187. | 187.1. Մշակել և իրականացնել արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականություն: Մշակել մեխանիզմներ, որոնց օգնությամբ ոլորտում առկա խախտումների բացահայտման և դրանց ուսումնասիրման գործընթացը յուրաքանչյուր տարվա համար կիրականացվի այդ տարվա տվյալների հիման վրա՝ այդ կերպ | | 2014թ. վերջին եռամսյակ | Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ապահովելով հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը | | | | | |
| 188. | 188.1. Մշակել և գործարկել հստակ և արդյունավետ օրենսդրական մեխանիզմներ ապահովելու համար հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը՝ հատկապես նվազեցնելով տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվող անհամաչափ բարձր հարկային բեռը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | |
| 189. | 189.1. Ձեռնարկել արդյունավետ միջոցներ լրացնելու համար ավելի ավանդական ոլորտներում ձեռնարկությունների բացը ՀՀ տնտեսության մեջ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | |
| 190. | 190.1. Ձեռնարկել հեռարձակման շուկայի գերկենտրոնացման կամ մենաշնորհացման կանխմանն ուղղված անհապաղ միջոցներ | | 2014թ. վերջին եռամսյակ | Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | | |
| 191. | 191.1. Ապահովել տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավասության | | 2014թ. վերջին եռամսյակ | Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | շրջանակների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացումը | | | | | |
| 192. | 192.1. Իրականացնել մենաշնորհային և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ հսկողություն և չարաշահումների կանխարգելում՝ մենաշնորհային օրենսդության վերանայման և անհրաժեշտ փոփոխությունների կատարման միջոցով | | 2014թ. չորրորդ եռամսյակ | Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով /համաձայնությամբ / | | |
| 193. | 193.1. Միջոցներ ձեռնարկել տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գնային քաղաքականության շարժերի նկատմամբ վերահսկողության օրենսդրությամբ սահմանված մեխանիզմների շրջանակի ընդլայնման ուղղությամբ | | 2014թ. չորրորդ եռամսյակ | Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով /համաձայնությամբ / | | |
| 194. | 194.1. Վերացնել շուկա մուտք գործելու խոչընդոտներն ինչպես ներքին արտադրողների, այնպես էլ ներմուծողների համար՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ բոլորի համար: Հայտնաբերել և կանխարգելել անբարեխիղճ տնտեսվարողների կողմից | | 2014թ. չորրորդ եռամսյակ | Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով /համաձայնությամբ / | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | սպառողների շահերը վնասելու փորձը | | | | | |
| **XXIII. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 195. | 195.1. Մշակել գործուն և արդյունավետ մեխանիզմներ ներդնելու փաստաբանների կողմից pro bono հիմունքներով անձանց իրավունքների պաշտպանության պրակտիկան | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 196. | 196.1. Ապահովել հասարակական կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրությամբ ամրագրված նպատակների իրականացման համար հանրային շահի ներկայացման հնարավորությունը դատական մարմիններում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 197. | 197.1. Նախաձեռնել բարեփոխումներ՝ ուղղված ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ստանձնած լիազորությունների պատշաճ կատարման իրականացմանը, մասնավորապես, դատարան բողոքարկված դատական ակտերի մանրամասն ուսումնասիրությանն ու իրավաչափ որոշումների կայացմանը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ Արդարադատության նախարարություն | | |
| 198. | 198.1. Ձեռնամուխ լինել դատավորին | | 2014թ. | ՀՀ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության պարագայում Արդարադատության խորհրդի կողմից կարգապահական վարույթի հարուցման և դրա արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրականացմանը՝ վարույթի օբյեկտիվությունն ու արդարությունը ապահովելու նպատակով | | վերջին եռամսյակ | Արդարադատության նախարարություն | | |
| 199. | 199.1. ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում զոհված կամ սպանված զինծառայողների, ինչպես նաև փակ հաստատություններում մահացած անձանց գործերի կապակցությամբ մշտապես իրականացնել արդյունավետ հսկողություն նախաքննությունն իրականացնող մարմնի նկատմամբ և դրսևորել հետևողականություն մեղավորներին պատժելու ուղղությամբ՝ նման դեպքերը կանխարգելելու նպատակով: Ձեռնարկել միջոցներ խաղաղ պայմաններում բանակում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ Դատախազություն | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մահացած անձանց գրեթե տասնամյա հնության քրեական գործերը բացահայտելու և/կամ ավարտելու համար: | | | | | | |
| 200. | 200.1. Անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար հատուկ նախատեսված սենյակների ստեղծում/հնարավոր կլինի ապահովել համապատասխան ֆինանսավորման դեպքում/ | | 2014թ. չորրորդ եռամսյակ | ՀՀ ոստիկանություն | | | ՀՀ պետական բյուջե |
| 201. | 201.1. Անչափահասների գործերով քրեական արդարադատության համապատասխանեցումը միջազգային նորմերին և չափանիշներին | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | | |
| 202. | 202.1. | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | | |
| 203. | 203.1. Իրականացնել անչափահասների գործեր քննող քննիչների, դատախազների և դատավորների, ինչպես նաև անչափահասների պաշտպանությունն իրականացնող փաստաբանների պարբերական վերապատրաստում՝ անչափահասների ներգրավմամբ | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ փաստաբանների պալատ | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գործերի քննության ընթացքում նրանց առանձնահատկությունները հաշվի առնելով | | | | | |
| 204. | 204.1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հնարավորինս սպառիչ սահմանել դատական նիստի հետաձգման հիմքերը<br>Փոփոխություններ կատարելու նպատակն է՝ բացառել նիստի հետաձգումը դրա համար չնախատեսված որևէ հիմքով, մշակել դատական նիստերի չարդարացված հետաձգումների կանխարգելման ընթացակարգեր՝ միջազգային փորձին համապատասխան՝ նկատի ունենալով, որ դատական նիստերի չարդարացված հետաձգումները կարող են հանգեցնել ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի խախտմանը | | 2014թ. դեկտեմբեր | ՀՀ արդարադատության նախարարություն | | ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում |
| 205. | 205.1. ՀՀ դատական օրենսգրքում դատավարական կամ նյութական սխալի ակնհայտ և կոպիտ լինելու չափանիշների սահմանմանն ուղղված վերլուծությունների | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կատարում<br>205.2. Արդարադատության խորհուրդ դիմելու ժամկետների վերանայում | | | | | |
| 206. | 206.1. Ձեռնարկել միջոցառումներ ապահովելու ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների իրականացումը դատական ակտերը վերանայելու պրակտիկայի ձևավորման առումով | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ ԱՆ | | |
| 207. | 207.1. Սահմանել անվճարունակ և խոցելի խմբերին դասվող վկաների համար հանրային պաշտպանի ծառայությունից օգտվելու հնարավորություն<br>207.2. Սահմանել թմրամիջոց գործածող անձանց որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավվելու դեպքում պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնության տրամադրման հնարավորությունը | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ ԱՆ | | |
| 208. | 208.1. ՀՀ ոստիկանության բոլոր բաժինների հերթապահ մասերում ապահովել անձանց մուտքի և ելքի գրանցումը<br>208.2. Սահմանել վկային իր գտնվելու վայրում հարցաքննության նվազագույն պայմանները | | 2014թ. երկրորդ եռամսյակ | ՀՀ ԱՆ, ՀՀ ոստիկանություն, | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 208.3. Ապահովել որպեսզի իրավապահ մարմինների ծառայողները կրեն համապատասխան համազգեստ, որի վրա դաջված կլինի ծառայողի նույնականացման համարը, իսկ քաղաքացիների հետ շփման մեջ մտնելիս ներկայանան և ներկայացնեն վկայական /հանել ոստիկանությունը/<br>208.4. Ապահովել ծանուցագրով վկայի հարցաքննության կանչելու մեխանիզմի, վկաների՝ իրարից անջատ հարցաքննելու սկզբունքի պատշաճ կիրառումը | | | | | |
| 209. | 209.1. Ապահովել դատական փորձաքննությունների իրականացման ապակենտրոնացումը /ոչ միայն Երևանում այլ նաև պետության մյուս համայնքներում/<br>209.2. Ապահովել քրեական վարույթի մասնակիցների հանդեպ անվտանգության միջոցների կիրառումը բոլոր անհրաժեշտ դեպքերում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ Դատախազություն, ՀՀ ոստիկանություն | | |
| **XXIV. ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 210. | 210.1. Անչափահաս օրինախախտների նկատմամբ | | 2014թ. չորրորդ | ՀՀ Գլխավոր դատախազություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու պրակտիկայի բացառում՝ քրեադատավարական պրակտիկայի վերանայման և անհրաժեշտության դեպքում օրենսդրական փոփոխությունների կատարման միջոցով | | եռամսյակ | | | |
| 211. | 211.1. Քրեական դատավարություն օրենսգրքով անչափահաս մեղադրյալների նկատմամբ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման առավել խիստ պայմաններ նախատեսել | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ Գլխավոր դատախազություն | | |
| 212. | 212.1. Ոստիկանության բաժիններում անցկացվող ծառայողական պարապմունքների ծրագրերում ընդգրկել և հետամուտ լինել Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված՝ բերման ենթարկվածին իր իրավունքների մասին անհապաղ տեղեկացնելու պահանջն ապահովելուն, անհարկի երկարատև քննչական գործողությունների և փաստաբանի մասնակցության ապահովման հետ կապված խնդիրներն վերացնելու ուղղությամբ | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ ոստիկանություն, ՀՀ ԱՆ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | /Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները ներկայացվում են այդ գործողությունների ժամանակ/ | | | | | |
| XXV. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ | | | | | | |
| 213. | 213.1. Միջոցառումներ ձեռնարկել ՀՀ-ում համայնքահեն ոստիկանության մոդելի մշակման ուղղությամբ | | | | | |
| 214. | 214.1. Միջոցներ ձեռնարկել օրենսդրությամբ (ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 733 որոշում) հստակեցնելու նոտարական ծառայությունների դիմաց գանձվող վճարների սակագները | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 215. | 215.1. Արդյունավետ հսկողություն իրականցնել ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների նկատմամբ, հարկ եղած դեպքում մեղավոր անձանց ենթարկել համապատասխան պատասխանատվության | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 216. | 216.1. Միջոցներ ձեռնարկել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից անձնագիր ստանալու գործընթացի, մասնավորապես՝ դատապարտյալի դիմումին հաջորդող փաստաթղթերի | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հավաքագրման փուլի համար հստակ ժամկետներ սահմանելու վերաբերյալ | | | | | |
| 217. | 217.1. Հատուկ միջոցառումներ իրականացնել գերատեսչությունների աշխատակիցների համար պրոֆեսիոնալիզմի, էթիկայի կանոնների իրազեկման բարձրացման և քաղաքացիների հետ հարգալից հաղորդակցման համար: | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ կառավարություն | | |
| 218. | 218.1. Մշակել նոտարական գրասենյակներում և ՔԿԱԳ տարածքային բաժիններում պարբերաբար դիտարկումներ անցկացնելու կարգ | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 219. | 219.1. Նոտարիատի բնագավառում էլկտրոնային կառավարման համակարգի ներդրում | Նոտարական գործողությունների կատարման համար մի շարք փաստաթղթերի կամ տեղեկատվության ստանալը անձանց առցանց եղանակով, հանրային ծառայությունների մատուցման «մեկ պատուհանի կանգառ» ներդրում | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 220. | 220.1. ՔԿԱԳ գործողությունների | | 2014թ. | ՀՀ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կատարման համար մի շարք փաստաթղթերի կամ տեղեկատվության ստանալը առցանց եղանակով, ինչպես նաև մեկ պատուհանի սկզբունքով քաղաքացիներին ծառայությունների մատուցման հեշտացումը<br>220.2. Ծառայությունների մատուցման ժամկետների կրճատում և ՔԿԱԳ գրանցումների կատարման համար տարածքային սահմանափակումների վերացում | | երկրորդ եռամսյակ | արդարադատությ ան նախարարություն | | |
| 221. | 221.1. Հանրային ռեգիստրների վարման /գրանցման/ միասնական սպասարկման կենտրոնների ներդրում<br>221.2. Սպասարկման անձնակազմի պարբերաբար դասընթացների կազմակերպում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատությ ան նախարարություն | | |
| **XXV. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ** | | | | | | |
| 222. | 222.1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել համապատասխան լրացում ապահովելու համար անձի հնարավորությունը՝ պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ ԿԱ Ոստիկանություն ՀՀ բնապահպանությա ն նախարարություն<br><br>ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գրանցումը չեղյալ համարելը անորոշ ժամկետով կնքված պայմանագիրը միակողմանիորեն դադարեցնելու դեպքում | | | | | |
| 223. | 223.1. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ նախատեսելով հարկային մարմնի կողմից ստուգումներ իրականացնելիս միայն բավարար հիմնավորումների և/կամ պատճառաբանության առկայության դեպքում հնարավոր լինի վերցնել հարկատուների աշխատավայրում գտնվող իրերը, ինչպես նաև սահմանելով թե ինչ չափորոշիչների հիման վրա է որոշվում, արդյոք ստուգումն իրականացնող անձի կողմից վերցված իրերը խոչընդոտում են տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին, թե՝ ոչ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ ԿԱ ՊԵԿ | | |
| 224. | 224.1. Գործնականում գույքի նկատմամբ արգելանքը կիրառել միայն տույժերի, կրկնապատկվող տույժերի և այլ հնարավորությունների սպառման դեպքում: Օրենսդրորեն նախատեսել պատասխանատվության | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ ԿԱ ՊԵԿ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | միջոցներ օրենքով սահմանված կարգը պահպանելու նպատակով | | | | | |
| 225. | 225.1. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում հստակեցնել հանրային շահի բացառիկության որոշման չափանիշները, ինչպես նաև օրենսդրորեն սահմանել հանրային շահի բացառիկության որոշման ընթացակարգը՝ ապահովելով շահագրգիռ կողմերի մասնակցությունը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 226. | 226.1. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել որպես բացառիկ գերակա հանրային շահ սեփականության օտարման դեպքերում համարժեք փոխհատուցման հաշվարկի հստակ չափանիշներ | Ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արադարդատության նախարարություն | | |
| 227. | 227.1. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանել բացառիկ գերակա հանրային շահի արդյունքում սեփականության օտարման վերաբերյալ որոշումների բողոքարկման ողջամիտ ժամկետներ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 228. | 228.1. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով ամրագրել պետության լիարժեք մասնակցությունը և պատասխանատվությունը բացառիկ գերակա հանրային շահի նպատակով օտարված գույքի իրացման բոլոր գործընթացներում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 229. | 229.1. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանել հետապնդվող հանրային շահի բացառիկության որոշման հստակ չափանիշներ | Բացառել բացառիկ գերակա հանրային շահի անվան տակ սեփականության բռնազավթումը և հատկացումը այլ մասնավոր սեփականատերերի | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 230. | 230.1. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանել հանրային շահի բացառիկության որոշման ընթացակարգ՝ ապահովելով շահագրգիռ կողմերի մասնակցությունը, նվազեցնելով կոռուպցիոն գործարքների հավանականությունը և | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | խտրականությունը | | | | | |
| 231. | 231.1. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով ամրագրել պետության լիարժեք մասնակցությունը և պատասխանատվությունը սեփականության օտարման և հանրային շահի նպատակով օտարված գույքի իրացման բոլոր գործընթացներում<br>231.2. Լիարժեք կերպով ապահովել օտարվող գույքի սեփականատիրոջ իրավունքի պաշտպանությունը օտարման ողջ գործընթացում | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 232. | 232.1. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել սեփականության օտարման դեպքերում համարժեք փոխհատուցման հաշվարկի հստակ չափանիշներ և մեթոդաբանություն | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 233. | 233.1. Միջոցներ ձեռնարկել ՀՀ-ում խուզարկություն իրականացնելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների, բավարարված միջնորդությունների և | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | խուզարկության ընթացքում քրեկան գործով անհրաժեշտ իրերի հայտնաբերման վերաբերյալ վիճակագրության վարման և վիճակագրական տեղեկատվության հասանելիության ուղղությամբ: | | | | | |
| **XXVI. ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ** | | | | | | |
| 234. | 234.1. Սահմանել պատասխանատվության մեխանիզմներ առանց հասարակայնության ներգրավման որոշումների ընդունման համար՝ հիմք ընդունելով առկա իրավական ակտերի պահանջները /«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք/ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատությ ան նախարարություն | | |
| 235. | 235.1. Օրենսդրորեն սահմանել պետական մարմինների կողմից կազմակերպվող և անցկացվող հանրային քննարկումներին հասարակայնության ողջամիտ ***նվազագույն մասնակցություն,*** ինչի արդյունքում միայն հանրային քննարկումը կհամարվի կայացած | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատությ ան նախարարություն | | |
| 236. | 236.1. Պատասխանատվություն | | 2014թ. | ՀՀ ԿԱ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | սահմանել մինչև 100 անձից բաղկացած հավաքների ազատության խոչընդոտման համար | | վերջին եռամսյակ | Ոստիկանություն | | |
| 237. | 237.1. «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով և առնչվող այլ իրավական ակտերով նախատեսել դրույթներ հասարակական կազմակերպությունների ֆինանսական կայունությունը խթանելու նպատակով | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատությ ան նախարարություն | | |
| 238. | 238.1. «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով և առնչվող այլ իրավական ակտերով ապահովել հասարակական կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական խնդիրների շրջանակում հանրային շահերի ներկայացման հնարավորությունը դատական մարմիններում | | 2015թ. վերջին եռամսյակ | ՀՀ արդարադատությ ան նախարարություն | | |
| **XXVIII. «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ** | | | | | | |
| 239. | 239.1. Օրենսդրությամբ կոնկրետ նախատեսել զինծառայողների համար պարտավորություններ սահմանող <<շարային ծառայություն>>, <<ոչ շարային ծառայություն>>, <<շարային | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ծառայություն սահմանափակումներով>> եզրույթները | | | | | |
| 240. | 240.1. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի մշակումը՝ գործող օրենքը միջազգային ստանդարտներին և ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների և Եվրոպայի խորհրդի առաջարկներին համապատասխանեցնելու համար | | 2014թ. առաջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| 241. | 241.1. Զինծառայության ընթացքում մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված հստակ միջոցառումների իրականացում | Նախազորակոչային տարիքի դպրոցականների շրջանում զինծառայության, զինծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընդհանուր իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության | 2014թ. երկրորդ եռամսյակ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ /համաձայնությամբ/ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՆԶՊ առարկայի շրջանակում զինծառայողների իրավունքների և պարտականությունների, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ թեմաների և դասավանդման մեթոդիկայի վերանայում, ինչպես նաև «Մարդու իրավունքները» առարկայի վերականգնում՝ որպես առանձին առարկա հանրակրթական դպրոցի ծրագրում՝ դրանում նախատեսելով նաև միջազգային մարդասիրական իրավունքի ծավալուն բաժին (շաբաթական 2 ժամ այս առարկայի համար) | | | | |
| 242. | 242.1. Ձեռնարկել միջոցներ պիտանի ոչ շարային ծառայության և պիտանի շարային ծառայության | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համար սահմանափակումներով զինծառայողների՝ առողջությանը հակացուցված ծառայության ձևերի մասին նախքան զինվորական ծառայության անցնելը պատշաճ տեղեկացնելու համար՝ անկախ զինծառայողի դիմումի առկայությունից | | | | | |
| 243. | 243.1. Ձեռնարկել միջոցներ ԿԲՀ-ների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումների տրամադրման պարտադիր կարգը պահպանելու համար | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| 244. | 244.1. Զինծառայության անցնող անձի առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ ԿԲՀ-ների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումների մեջ, որպես պարտադիր պայման, ներառել զինվորական ծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում նրա առողջական վիճակի հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումների գրառումը | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| 245. | 245.1. Օրենսդրորեն սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անձանց պաշտպանական գերատեսչության կողմից փաստաթղթերի տրամադրման 7-օրյա ժամկետ | | | | | |
| 246. | 246.1. Հրապարակել ՀՀ ԶՈՒ զինծառայողներին (ինչպես ժակետային, այնպես էլ՝ պայմանագրային) տրամադրվող բժշկական ծառայության տրամադրման վիճակի, խնդիրների եւ ձեռնարկված միջոցառումների մասին ՀՀ պաշտպանության նախարարի տարեկան զեկույց: | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| 247. | 247.1. Սահմանել առողջական խնդիրների հետևանքով վաղաժամկետ զորացրված զինծառայողների, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետի ավարտով զորացրված զինծառայողների կրած առողջական, սոցիալական վնասի արժանապատիվ և համարժեք նյութական և բարոյական փոխհատուցում «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով: | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| 248. | 248.1. Ապահովել զորակոչիկների և զինծառայողների պարտադիր համալիր բժշկական զննությունը՝ | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անկախ գանգատների առկայությունից: | | | | | |
| 249. | 249.1. Իրականացնել զինծառայության հետ կապված առողջական խնդիրների ծագման պատճառների ուսումնասիրություն անկախ բժշկական հանձնաժողովի կողմից: | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ առողջապահությա ն նախարարություն | | |
| 250. | 250.1. Ապահովել զորակոչիկների եւ զինծառայողների իրավունքների վերաբերյալ բոլոր ենթաօրենսդրական ակտերի, նրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հանրային մատչելիությունը<br>250.2. Ամրագրել զորակոչիկին նրա առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական զննության եզրակացության մասին ակտի պարտադիր տրամադրումը՝ անկախ նրա դիմումի առկայությունից<br>250.3. | | 2014թ. երկրորդ եռամսյակ | ՀՀ ՊՆ, բոլոր ստորև ներկայացող դեպքերի | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 250.4. Ամրագրել զորացրումից առաջ զինծառայողների առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության անցկացումը եւ եզրափակիչ ակտի պարտադիր տրամադրումը զինծառայողին եւ նրա հարազատին<br>250.5. Սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց պաշտպանական գերատեսչության կողմից տրամադրվող փաստաթղթերի 7-օրյա ժամկետ<br>250.6. | | 2015թ. վերջին եռամսյակ | | | |
| | | | | | | |
| | | | 2015թ. վերջին եռամսյակ | , ՀՀ ՊՆ | | |
| 251. | 251.1. Ապահովել շարային ծառայությանը ոչ շարային եւ սահմանափակումներով ծառայությանը պիտանի ճանաչված զինծառայողների ներգրավումը բացառող, կանխարգելող անկախ վերահսկողական մեխանիզմ<br>251.2. Ապահովել զորակոչիկների եւ զինծառայողների պարտադիր համալիր բժշկական զննությունը՝ | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ ՊՆ | | |
| | | | 2014թ. երրորդ եռամսյակ | ՀՀ ՊՆ, ՀՀ առողջապահության նախարարություն | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անկախ գանգատների առկայությունից<br>251.3. Հրապարակել ՀՀ ԶՈւ զինծառայողներին տրամադրվող բժշկական ծառայության տրամադրման վիճակի, խնդիրների եւ ձեռնարկված միջոցառումների մասին ՀՀ պաշտպանության նախարարի տարեկան զեկույց | | 2015թ. վերջին եռամսյակ | ՀՀ ՊՆ | | |
| | | | 2014թ. վերջին եռամսյակ | ՀՀ ՊՆ, ՀՀ առողջապահությա ն նախարարություն | | |
| 252. | 252.1. Մշակել և ընդունել «ՀՀ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության մեխանիզմների մասին» ՀՀ օրենք<br>252.2. Համապատասխանեցնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը ՍԴ թիվ 2012 թ. մարտի 6- թիվ ՍԴՈ-1010 որոշմանը<br>252.3. Մշակել և որպես պարտադիր տեղեկատվություն հրապարակել ՊՆ կողմից ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների մասին հաշվետվությունը<br>252.4. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով | | 2014թ. երկրորդ եռամսյակ | ՀՀ ՊՆ, ՀՀ ԱՆ, ՄԻՊ ստորև ներկայացվողների համար | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | սահմանել ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին տարեկան թեմատիկ զեկույցի հրապարակում մինչև ՀՀ ռազմական օմբուդսմենի հիմնադրումը ըստ ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականի<br>252.5. Գաղտնազերծել ՀՀ պաշտպանական բյուջեի ոչ ռազմական հատվածը՝ նախագծման, պլանավորման, ընդունման, իրացման և մյուս բոլոր փուլերում<br>252.6. Ներդնել Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը<br>252.7. Ապահովել զինված ուժերում մահացության դեպքերի պատշաճ քննությունը և թույլատրելի սահմաններում տեղեկատվության թափանցիկությունը | | | | | |
| **ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԱՆՁԱՆՑ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**[1] | | | | | | |

[1] Այս առաջարկությունը ներկայացվել է նաև նախկին փաթեթով, սակայն չի ներառվել Միջոցառումների ծրագրում: Ամեն դեպքում չափազանց կարևոր ենք համարում իրավապաշտպանների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը հաշվի առնելով իրավապաշտպանական գործունեության խոցելիությունը և այն, որ իրավապաշտպանները իրենց գործունեությունը իրականացնելիս բազմիցս դառնում են տարբեր ոլորտներում շահերի բախման զոհ: Այս միջոցառումների ընդրկումը կարևոր է նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման տեսանկյունից: Իրավապաշտպանների վիճակի վերաբերյալ հիմնախնդիրները ներկայացված են Իրավապաշտպանների վիճակը ՀՀ-ում «2011 հունվար- 2012 դեկտեմբեր» Զեկույցի մեջ (Տես՝ http://hcav.am/wp-content/uploads/2013/02/Report-Armenian1.pdf)

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 253. | 253.1. Իրականացնել ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցողի առաջարկությունները, որոնք հրապարակվել են 2010թ. Հայաստան կատարած նրա այցից հետո.<br>253.2. Ապահովել իրավապաշտպանների պաշտպանությունը, հատկապես նրանց, ովքեր պաշտպանում են խոցելի խմբերի իրավունքները, օրինակ ԼԳԲՏ անձանց իրավունքները.<br>253.3. Վերանայել փաստաբանների գործունեության վերաբերյալ օրենքը՝ ապահովելով, որպեսզի ոչ փաստաբանները կարողանան մարդու իրավունքների խախտումներից տուժողների շահերը ներկայացնել դատարանում.<br>253.4. Ապահովել, որ իրավապաշտպանների նկատմամբ զրպարտության ու վարկաբեկման դեպքերը քննվեն արդյունավետ և թափանցիկ կերպով.<br>253.5. Անցկացնել իրավապաշտպանների | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրավունքների խախտման և նրանց գործունեության սահմանափակման բոլոր դեպքերի անաչառ, թափանցիկ և արդյունավետ քննություն, ապահովել, որ այդ քննությունները կատարվեն անկախ մարմնի կողմից.<br>253.6. Կազմակերպել հանդիպումներ և երկխոսություններ տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են մարդու իրավունքների զանազան հարցերի ուղղությամբ՝ նաև մարզերում՝ բարձրացնելու պաշտոնատար անձանց իրազեկվածությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշների, այդ չափանիշների իրականացման և դրանց կիրառման մեխանիզմների վերաբերյալ.<br>253.7. Սահմանել իրավապաշտպանների և իրավապաշտպանական գործունեություն ծավալող կազմակերպությունների համար հանրային հեռուսատեսությամբ անվճար եթերաժամից օգտվելու | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հնարավորություն: | | | | | |